ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 հուլիսի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

110
(2590)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 57



2018 թվականի հոկտեմբերի 2-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց 2-3 ամսում հրատապ արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին, մինչդեռ դրանից երեք ամիս առաջ Նիկոլ Փաշինյանը նշում էր, որ ընտրությունները պետք է կայանան կամ մայիսի վերջին, կամ հունիսին: Ավելին, նույն Փաշինյանը նշում էր, որ մինչեւ արտահերթ ընտրությունները պետք է ընդունվի նոր Ընտրական օրենսգիրք, եւ փոփոխություններ կատարվեն «Կուսակցությունների մասին» օրենքում, եւ այդ ամենին պետք է հասնել քաղաքական ուժերի լիակատար կոնսենսուսի պայմաններում: Արտահերթ խորհրդարանական ընտրությունները, սակայն, տեղի ունեցան 2018 թվականի դեկտեմբերի 9-ին: Նիկոլ Փաշինյանը հրաժարական տվեց ՀՀ վարչապետի պաշտոնից, եւ քաղաքական պայմանավորվածության արդյունքում Ազգային ժողովը երկու անգամ չընտրեց նոր վարչապետ: Ընտրությունները տեղի ունեցան հին Ընտրական օրենսգրքով եւ այն նույն ռեյտինգային ընտրակարգով, որին Փաշինյանի իշխանությունը դեմ էր: Ստացվում է՝ արտահերթ ընտրություններ անցկացնելու մասին իր հակասական հայտարարություններով Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է քաղաքացիներին, ու նրա այդ վարքագիծը ժամանակի քննությանը չի դիմանում:

«Վերջին ճգնաժամի հետեւանքով բազմաթիվ կենսաթոշակային ֆոնդեր լուրջ գումարներ կորցրեցին, եւ չկա ոչ մի երաշխիք, որ այդպիսի բան էլ չի կրկնվի: Երաշխավորումը բյուջեով փաստարկ է միայն միամիտների համար: Իսկ թե որքան արդյունավետ կկառավարվեն քաղաքացիների կուտակած միջոցները, մեծ հարց է»,- սա ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ 2014-ին տված հարցազրույցից մի հատված է, որտեղ նա, անդրադառնալով այն ժամանակ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի կողմից երեւան բերված, կուտակային կենսաթոշակների ծրագրին, ահազանգում էր՝ կուտակայինը կարող է ձախողվել, քաղաքացիների միջոցները՝ կորչել անվերադարձ: Կուտակային կենսաթոշակների դեմ նաեւ մերօրյա իշխանավորներից շատերն էին պայքարում: Ժամանակների հետ նրանց դիրքորոշումներն էլ փոխվեցին, ու, ի տարբերություն նախագծի կնքահայր Տիգրան Սարգսյանի, Փաշինյանի կառավարությունը կուտակայինի «պարտադիր» բաղադրիչը տարածեց բոլորի վրա: Այսինքն՝ եթե մինչեւ 2018-ը պարտադիր կուտակայինի համար հավելյալ հարկ միայն պետական համակարգի աշխատողներն էին վճարում, Փաշինյանի իշխանութունն այդ պարտականությունը նաեւ մասնավոր հատվածի վրա դրեց: «Ակնհայտ է, որ համակարգը ռիսկային է ու ծառայում է ֆինանսավարկային համակարգի օլիգարխների շահերին: Կուտակային միջոցներն անընդհատ ֆինանսական շուկայի ռիսկերի տակ են գտնվելու, եւ որեւէ երաշխիք՝ այդ գումարների ապահովության մասով, չկա»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է տնտեսագետ Սուրեն Պարսյանը: Կուտակային կենսաթոշակները 2014-ից ի վեր պահ են տրված երկու ոչ հայկական կազմակերպությունների: Դրանք Հայաստան են եկել Տիգրան Սարգսյանի իրականացրած լոբիինգի արդյունքում: Այդ կազմակերպությունների հետ, ըստ Պարսյանի, Կենտրոնական բանկը մի շարք պայմանագրեր ունի կնքած, որոնք, սակայն, մինչ օրս հրապարակված չեն:

Ինչպես հայտնի է, երեկ տեղի է ունեցել Դատավորների ընդհանուր ժողովը, որի ժամանակ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամ է ընտրվել դատավոր Նաիրա Հովսեփյանը: Ուշագրավ է, որ դատական համակարգի՝ մշտապես աղմուկ բարձրացրած, ճնշումների մասին խոսող դատավորները չեն եղել երեկվա ժողովին: «Ժողովուրդ» օրաթերթը ֆիքսեց, որ չկային Զարուհի Նախշքարյանը, Մխիթար Պապոյանը, Արման Հովհաննիսյանը, Վազգեն Ռշտունին եւ այլք, այսինքն՝ մշտապես դատական համակարգի վրա գործադրվող ճնշումների մասին բարձրաձայնող դատավորները բոկոտել էին նիստը: Հետաքրքիր է, որ չէին եկել նաեւ աղմկահարույց գործեր քննող դատավորները: Նրանց թվում են դատավորներ Արման Դանիելյանը եւ Մնացական Մարտիրոսյանը: Ըստ էության, դատական համակարգը բաժանվել է երկու մասի, եւ այդ մասերի բաժանված դատավորների խմբերը ներկա չէին ժողովին. չէին եկել եւ՝ ճնշումների մասին բարձրաձայնող դատավորները, եւ՝ ճնշումների ենթարկված, աղմկահարույց գործեր քննող դատավորները: Գուցե վերջինների դեպքում պատճառն այն է, որ լրագրողների հնարավոր հարցերից խուսափեն: Ամեն դեպքում, ունենք մի իրավիճակ, երբ դատական համակարգում կրկին մտահոգիչ իրավիճակ է, եւ ոլորտի կարեւորագույն իրադարձությանը ոչ բոլորն են ներկա գտնվում:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը վերջապես որոշել է վերահսկել օնլայն տաքսի ծառայությունների ոլորտը: Ինչպես հայտնի է, երկար ժամանակ է, ինչ բազմաթիվ վարորդներ, որոնք իրենց ավտոմեքենաներով իրականացնում են ուղեւորափոխադրումներ, բայց չեն վերահսկվում եւ չեն հարկվում: Ըստ ՏԿԵ-ի՝ ստացվում է, որ էլեկտրոնային հարթակներ ստեղծած կազմակերպությունները փաստացի անօրինական ուղեւորափոխադրման գործունեություն են իրականացնում՝ պատվերներ ընդունելով եւ փոխանցելով անհատ վարորդներին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ էլեկտրոնային հարթակների միջոցով ուղեւորների պատվերներ գրանցելու եւ փոխանցելու գործունեությունը կսահմանվի ծանուցման ենթակա գործունեություն: Սահմանվելու են կարգավորումների խախտումների դեպքում վարչական պատասխանատվության միջոցները: Օրինակ՝ եթե էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր փոխադրման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով եւ կարգով պետական տուրքի գանձումը չապահովեն, ապա կարող են 300 հազար դրամով տուգանվել: Իսկ էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից յուրաքանչյուր փոխադրման համար պատվերի ուղեւորին վճարման էլեկտրոնային անդորրագիր չտրամադրելու դեպքում տուգանքի չափը կկազմի 200 հազար դրամ: Իսկ թե ով եւ ինչպես է վերահսկելու նրանց իրականում, դժվար է ասել, քանի որ տասնյակ այսպիսի օրենքներ մնացել են թղթի վրա:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԺԵՔՐԿՎԵԼ ԵՆ

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ՀԻՄՔ ՉԿԱ

2014-ին ներդրված ղարսադիր կուտակային կենսաթոշակների համակարգի դեմ այն ժամանակ նաեւ մերօրյա իշխանավորներից շատերն էին ղայֆարում: Հայտնի ասացվածքի նման, սակայն, «փոխվում են ժամանակները, փոխվում մարդիկ»: Քաղաքացիներից շատերն այժմ ահազանգում են՝ կուտակած կենսաթոշակի գումարները նվազել են: Տնտեսագետ Սուրեն Պարսյանի գնահատմամբ՝ օրենքի ընդունումից 8 տարի անց արդեն արձանագրում ենք. «Այս համակարգի ընդդիմախոսները ճիշտ էին, ու մենք բավական ռիսկային կուտակային կեսաթոշակային համակարգ ունենք, որ մեծ կախվածություն ունի ֆինանսական համակարգի վայրիվերումների հետ»:

Այս տարվա առաջին կիսամյակի ընթացքում կեսաթոշակների ֆոնդերում կուտակած գումարները ոչ միայն եկամուտ չեն բերել քաղաքացիներին, ասում է Պարսյանը, դեռ մի բան էլ նվազել են միջինում մինչեւ 5-7 տոկոսի չափով: Ստացվել է մի իրավիճակ, որ ավելի շատ գումար կուտակածները այժմ ավելի շատ են վնաս կրել:

Տնտեսագետը հիշեցնում է՝Նիկոլ Փաշինյանի կաբինետը 2018-ին՝իշխանության գալուց անմիջապես հետո, նախկինում ունեցած դիրքորոշումից հրաժարվեց ու պարտադիր կուտակայինն ամբողջ ծավալով ներդրեց՝ պատճառաբանելով, թե կուտակայինի «պարտադիր» բաղադրիչի ներդրումն ուղիղ համեմատական է իշխանության նկատմամբ ունեցած վստահության հետ: «Գործող իշխանությունները, չնայած իրենց նախկինում կատարած հայտարարություններին, այս համակարգը ներդրեցին՝ պատճառաբանելով, թե մենք անցել ենք անվերադարձելիության կետ: Վստահեցրին նաեւ, որ պարտադիր կուտակային կենսաթոշակների կայունությունը կապված է իշխանության նկատմամբ ունեցած վստահելիությամբ: Իրականության մեջ երկու միտքն էլ, սակայն, սխալ էին»,- շեշտում է մեր զրուցակիցը:

Որպես օրինակ միջազգային փորձն է ներկայացնում, որ մի շարք երկրներ, այդ թվում՝ Դանիան, Սլովակիան, Ռուսաստանը, հասկանալով, որ կուտակայինը կենսաթոշակների հաաքագրման լավագույն մեթոդը չէ, ընդունել, այնուհետ հրաժարվել են պարտադիր կուտակային համակարգից: «Այս համակարգի կայությունը կապված է համաշխարհային, ինչպես նաեւ ներքին տնտեսական, ֆինանսական վիճակով: Եթե համաշխարհային տնտեսությունն այս պահին ճգնաժամի մեջ է, ապա մեր գումարները, որ ներդրվել են նաեւ օտարերկյա պարտատոմսերի կամ ներդրումների մեջ, պարզ է, մեծ ռիսկի տակ են»,- ավելացնում է նա:

Տնտեսագետի փոխանցմամբ՝ մեր գումարների 30 տոկոսը Հայաստանից դուրս են հանել կուտակայինի կառավարիչները, որոնք գումարները տարբեր երկրներում տարբեր պարտատոմսերում են ներդրել: Այժմ նրանք ճգնաժամի մեջ են, իսկ արժետոսմերը, անշուշտ, արժեզրկվել են, ինչի հետեւանքով մեր կուտակած միջոցները քչանում են: Ու եթե հենց հիմա գնանք թոշակի, ահազանգում է Պարսյանը, բավական ցածր թոշակ ենք ստանալու:

Աշխատանքի ու սոցիալական հարցերի փոխնախարար Դավիթ Խաչատրյանը հորդորում է չշտապել նման վերլուծություններ անելիս: Այս ամենը, ասում է, պետք է երկարաժամկետ կտրվածքով քննարկել: «Սա նորմալ երեւույթ է, որովհետեւ ֆինանսական շուկան տանատողական համակարգ է, ու նման հարցերը պետք է ավելի երկարաժամկետ հատվածում քննարկենք»,- իր կարծիքն է ներկայացնում փոխնախարարը:

Տնտեսագետ Պարսյանի հավաստիացմամբ՝ եթե այս գումարները քաղաքացին հայաստանյան բանկերից մեկում որպես ավանդ ներդներ, ապա տարեկան շատ ավելի մեծ տոկոսային եկամուտ կունենար, ու ինքը կորոշեր՝ ինչպես տնօրինել իր կուտակած գումարը: Փոխնախարար Խաչատրյանը, սակայն, այդպես չի կարծում: «Կուտակային համակարգի շահավետությունը ռիսկերի կառավարումն է-, ասում է ու հավ?լում:- Կառավարիչները մեր ներդրած ակտիվները ռիսկերի դիվերսիֆիկացնելու համար ներդրումները տարբեր ուղղությամբ են կատարել»:

Հայաստանում կուտակային կեսաթոշակների գումարները երկու ֆոնդերի են պահ տրված, դրանցից եւ որեւէ մեկը հայաստանյան ընկերություն չէ. մեկը գերմանական է, մյուսը՝ ֆրանսիական: Ֆոնդերից մեկի ներկայացուցիչը մանրամասնում է՝2022-ի առաջին կիսամյակի եկամտաբերությունը, այո, նվազել, սակայն չի նվազել մասնակիցների համար տարիների ընթացքում աշխատած եկամուտը:

Վնասը վերագնահատման արդյունք է, բացատրում է Հայաստանի կենտրոնական դրամատան ֆինանսական համակարգի կարգավորման վարչության արժեթղթերի շուկայի կարգավորման բաժնի պետ Վիգեն Շահնազարյանը: Ըստ նրա՝ եթե արտարժույթների փոխարժեքը բարձրանա, ապա դրանք՝ կուտակայինի եկամուտները, նորից շատ ավելի մեծ չափով վերականգնվելու են: Դրանք անվերադարձելի կլինեին, եթե քաղաքացին արդեն կենսաթոշակի անցներ: Հարցին՝ այսինքն սարսափելի որեւէ բան չի կատարվում, պատասխանում է. « Ոչ, չի կատարվում, ու մեր ուղերձը միշտ այն է եղել, որ կարճաժամկետ փոփոխություններով կատարողականները չպետք է դատել»:

Կուտակային կեսաթոշակների համար պատասխանատու պետական բոլոր գերատսչությունների՝Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության, Կենտորնական բանկի, ինչպես նաեւ ֆոնդերի կառավարիչների ներկայացրած պարզաբանումները տնետսագետ Սուրեն Պարսյանի համար, այնուամենայիվ, հիմնարար չեն: Ու եթե անգամ մեր գումարի ճակատագիրը որոշող ֆոնդերը լուծարվեն, ապա պետությունը երաշխավորում է դրա միայն կեսը վերադարձնել: Ի դեպ, այդ երաշխավորության տակ որեւէ հիմք չկա:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՕՆԼԱՅՆ ՏԱՔՍԻՆԵՐԸ ԿՀԱՐԿՎԵՆ

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը վերջապես որոշել է վերահսկել օնլայն տաքսի ծառայությունների ոլորտը: Այս մասին որոշման նախագիծը հանրային քննարկման է դրել ՏԿԵ-ն: Չէ՞ որ բազմաթիվ վարորդներ կան, որոնք իրենց ավտոմեքենաներով իրականացնում են ուղեւորափոխադրումներ, բայց չեն վերահսկվում եւ չեն հարկվում: Ստացվում է, որ էլեկտրոնային հարթակներ ստեղծած կազմակերպությունները փաստացի անօրինական ուղեւորափոխադրման գործունեություն են իրականացնում՝ դասվերներ ընդունելով եւ փոխանցելով անհաս վարորդներին: Արդյունքում ուղեւորափոխադրումների ոլորտում ստեղծվել է անհավասար մրցակցային դայմաններ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ էլեկտրոնային հարթակների միջոցով ուղեւորների պատվերներ գրանցելու եւ փոխանցելու գործունեությունը կսահմանվի ծանուցման ենթակա գործունեություն: Այսինքն՝ հարկային պարտավորություններ կսահմանվեն տնտեսական գործունեություն իրականացնողների համար, եւ կկիրառվեն նոր մեխանիզմներ: Նախ՝ վերանայվելու է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կանոնավոր ուղեւորափոխադրումների արտոնագրի տրամադրման գործընթացը: Սահմանվելու են կարգավորումների խախտումների դեպքում վարչական պատասխանատվության միջոցները: Օրինակ՝ եթե էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր փոխադրման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով եւ կարգով պետական տուրքի գանձումը չապահովեն, ապա կարող են 300 հազար դրամով տուգանվել: Իսկ էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից յուրաքանչյուր փոխադրման համար պատվերի ուղեւորին վճարման էլեկտրոնային անդորրագիր չտրամադրելու դեպքում տուգանքի չափը կկազմի 200 հազար դրամ:

Բացի այս, տեսադաշտում են հայտնվելու նաեւ 6-8 նստատեղով թեթեւ մարդատար ավտոմոբիլով ֆիզիկական անձինք, որոնք միջմարզային ուղեւորափոխադրումներ են իրականացնում ցածր սակագներով: Սա հանգեցնում է կանոնավոր ուղեւորափոխադրումների բնագավառում գործունեություն իրականացնողների դժգոհությունը: Բանն այն է, որ ուղեւոր չունենալու պատճառով կազմակերպությունները հրաժարվում են կանոնավոր երթուղիների սպասարկել:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԲԱՔՈՒՆ ՄՏԱՀՈԳՎՈՒՄ Է

Ադրբեջանն Արցախի՝ իր վերահսկողության տակ անցած տարածքներում շարունակում է լայնամասշտաբ ճանապարհների, թունելների ու կամուրջների կառուցումը: 44-օրյա պատերազմից ի վեր պաշտոնական Բաքուն մտահոգվում է ոչ միայն իր կողմից օկուպացված բնակավայրերի վերականգման ու վերազինման, այլ նաեւ դրանք մեկը մյուսին կապելու ճանապարհային հանգույցների մասին:

Ավելի քան մեկուկես տարվա ընթացքում ճանապարհաշինարարություն է իրականացրել Ադրբեջանը: Լրատվամիջոցը, օգտվելով արբանյակային լուսանկարներից, ադրբեջանական ու թուրքական մամուլի հրապարակումներից եւ այլ բաց աղբյուրներից, ուսումնասիրել է իրականացվող աշխատանքներն ու պարզել՝ այս պահին նախատեսվում եւ իրականացվում է առնվազն 35 թունելի, 10 ավտոճանապարհի ու 2 երկաթուղու կառուցում: Վերանորոգվում են նաեւ նախկինում առկա ճանապարհները:

Իսկ ArmLur.am-ն ավելի վաղ էր հայտնել, որ Բաքուն ադբեջանական Գյանջան Քարվաճառին կապելու համար մոտ 12 կմ-անոց թունել է կառուցում, որ շահագործման կհանձնվի 2025-ին՝ ճիշտ այն ժամանակ, երբ լրանում է Արցախում ռուսական խաղաղապահ զորակազմի գործունեության ժամկետը:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԸ ՉԷ

ԲԴԽ նախկին նախագահներ Ռուբեն Վարդազարյանի եւ Գագիկ Ջհանգիրյանի հանդիպմանը ներկա գտնված ԲԴԽ անդամ Ստեփան Միքայելյանը լրագրողների հետ զրույցում անդրադարձավ Ռուբեն Վարդազարյանի հրապարակած ձայնագրությանը՝նշելով, որ իրավական գնահատականը կտա հարուցված քրեական գործը. «Հարուցված գործի արդյունքներով ամեն ինչ կորոշվի: Դա քրեական գործ է, եւ ես իրավունք չունեմ դրա մասին որեւէ դիտողություն կամ կարծիք հայտնելու»:

Դիտարկմանը, որ ինքը այդ հանդիպման միջնորդն է, Միքայելյանն ասաց, որ դա միջնորդություն չէ, Վարդազարյանն ու Ջհանգիրյանն իր ընկերներն են, եւ փորձել է հարթել լարվածությունը. «Ես իմ երկու ընկերներին հրավիրել եմ, որ իրար հետ ընթրենք: Դա իմ ցանկությունն է եղել, որ իմ ընկերները, որ իրար հետ որոշակի լարվածություն ունեին, հարթվեր»:

Գագիկ Ջհանգիրյանի նախագահությամբ ԲԴԽ-ն կասեցրեց, ապա դադարեցրեց Ռուբեն Վարդազարյանի լիազորությունները, համապատասխան որոշումը հրապարակվեց հունիսի 23-ին, իսկ հունիսի 20-ին Վարդազարյանն ասուլիսում հրապարակել էր ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանի ձայնագրությունը, որտեղ Ջհանգիրյանը Վարդազարյանին համոզում էր հրաժարական տալ:

Բացի այդ, զրույցում ԲԴԽ անդամ Գրիգոր Բեքմեզյանը հայտնել էր, որ Վարդազարյանի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումը կայացվել է հունիսի 16-ին, այսինքն՝նախքան ձայնագրության հրապարակումը: Այս ամենին հաջորդեց Գագիկ Ջհանգիրյանի հրաժարականը. ԲԴԽ-ն դեռ նախագահ չի ընտրել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԲՌՆԱԳԱՆՁՎԻ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՒՅՔԸ

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան 2022 թվականի հունիսի 28-ին ներկայացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ տասներկուերորդ հայցադիմումը, որն 2022թ. հուլիսի 11-ին ընդունվել է վարույթ: Համաձայն վերջինի՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին Մանվել Գրիգորյանի ժառանգներից եւ փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող թվով 28 անշարժ գույքեր, թվով 16 տրանսպորտային միջոցներ, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքները, որն ընդհանուր կազմում է ավելի քան 2.552.000.000 ՀՀ դրամ, ինչպես նաեւ մասնակցություններ թվով 6 իրավաբանական անձերում, իրավաբանական անձանց տրամադրված ընդհանուր 668.160.803 ՀՀ դրամ փոխառությունների պահանջի իրավունքը, 19.236.606 ՀՀ դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ, 18.656.316 ՀՀ դրամ՝ ավանդների մնացորդ, ինչպես նաեւ 17.027.871 ՀՀ դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում եւ հնարավոր չէ բռնագանձել՝ հիմք ընդունելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը: Առաջիկայում վարչության կողմից այլ գործերով եւս, որոնցով արդեն իսկ կիրառվել են հայցի նախնական ապահովման միջոցներ, կներկայացվեն ապօրինի գույքի բռնագանձման հայցադիմումներ:

660 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 25-ին՝ երեկոյան ժամը ութին, Այգեձոր գյուղի բնակիչներից մեկը ոստիկանության Տավուշի բաժնում տվել էր հաղորդում, որ հունիսի 15-ից հուլիսի 23-ն ընկած ժամանակահատվածում իր առանձնատան մուտքի դռան սողնակը բացել ու մտել են տուն եւ ննջասենյակի մահճակալի ներքնակի տակից հափշտակել մեկ միլիոն 660 հազար դրամ: Հաղորդումից մոտ երկու ժամ անց, գողությունը կատարելու կասկածանքով, ձերբակալվեց տուժած այգեձորցու 27-ամյա հարեւանուհին: Ընդունելով մեղքը՝նա պատմեց, որ դեռ հուլիսի սկզբներին, լինելով հարեւանի տանը, ներքնակի տակից գողացել էր 200 հազար դրամ: Այնուհետեւ՝ արդեն հուլիսի կեսերին, իմանալով, որ տանը մարդ չկա, դռան փայտե սողնակը բացել ու նույն ներքնակի տակից տարել էր եւս 200 հազար դրամ: Դրանից հետո, օգտվելով տանտերերի անուշադրությունից, եւս հինգ անգամ արդեն սովոր տեղից տարել էր տարբեր չափի գումար: Կինը պատմեց նաեւ, թե ինչպես էր ծախսել փողը: 620 հազար դրամ փոխանցել էր իր բանկային քարտի հաշվին, 47 հազարը ձերբակալման պահին մոտն էր, 100 հազարը պահել էր տանը, իսկ մնացած փողով մարել էր գյուղի տարբեր խանութ-կրպակներում կուտակած պարտքը:

ԽԱԽՏՎԵԼ Է ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄ

«Ավետիք Չալաբյանին կալանքի տակ պահելը քաղաքական վրեժխնդրության հստակ դրսեւորում է, որը տարբեր փաստարկներով հիմնավորում է փաստաբանական կողմը»,- հայտարարություն է տարածել ՀՀ Ազգ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Օրերս ինձ է դիմել Ավետիք Չալաբյանի փաստաբանը՝ հայտնելով, որ վարույթն իրականացնող մարմինների ապօրինությունների արդյունքում խախտվում է Ավետիք Չալաբյանի հիմնարար՝ արդար դատաքննության եւ անձնական ազատության իրավունքը, եւ նրա նկատմամբ կալանքը կիրառվում է որպես պատիժ՝ հավելելով, որ հայաստանյան ներպետական պաշտպանության մեխանիզմները բացարձակ անարդյունավետ են քաղաքական զգայուն գործերով, ուստի գտնում է, որ վերոնշյալ ապօրինությունները եզակի բնույթ չեն կրում ու դարձել են օրինաչափություն:

Անհրաժեշտություն եմ համարում այս թեմային հանրային հնչեղություն հաղորդելը, քանի որ իրավական դաշտում տարվող աշխատանքը անպտուղ է:

Այսպես, փաստաբանի հաղորդմամբ՝ Ավետիք Չալաբյանին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված է ընդամենը մեկ մոնտաժված եւ անթույլատրելի համարվող ձայնագրություն, որում Ավետիք Չալաբյանը հավաքներին մասնակցելու նպատակով նյութական շահագրգռվածություն առաջարկելու վերաբերյալ որեւէ պնդում չի անում: Հակառակը, ի պատասխան ակնհայտ պրովոկացիա իրականացնող զրուցակից Թոռնիկ Աիլյանի հարցադրումների, պատասխանում է, որ «կյանքում կան ոչ նյութական արժեքներ, որոնք ավելի կարեւոր են»:

Նույնիսկ Թոռնիկ Աիլյանն առերես հարցաքննության ժամանակ պնդել է, որ Ավետիք Չալաբյանը երբեք իրեն գումար կամ այլ նյութական շահ չի առաջարկել հավաքներին մասնակցելու համար, իսկ մեղադրանքի հիմքում դրված հանցակազմը (երկու եւ ավելի անձանց նկատմամբ) ընդամենը ունեցել է կալանավորումը հնարավոր դարձնելու նպատակ: Փաստաբանը նշել է նաեւ, որ ՀՀ դատախազությանը ներկայացվել են նաեւ ՀՀ ազգային ժողովի պատգամավորներ Սեյրան Օհանյանի, Իշխան Սաղաթելյանի, Էլինար Վարդանյանի, Հայկ Մամիջանյանի եւ Տիգրան Աբրահամյանի, ՀՀ նախկին փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանի, ինչպես նաեւ «Արար» հիմնադրամի երաշխավորությունները՝ Ավետիք Չալաբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխելու վերաբերյալ: Դատախազը, խախտելով միջնորդությունների քննարկման ժամկետը, մոտ 10 օր ուշացմամբ ուղարկել է մերժման որոշում: Դատախազի նշված որոշումը նույնպես բողոքարկվել է դատական կարգով եւ գտնվում է քննության փուլում: Նախաքննության ամբողջ ընթացքում հանդես են եկել մի շարք միջնորդություններով՝ ուղղված դատախազությանը եւ քննիչին, որոնք կամ մերժվել են, կամ հետաձգվել ու այդպես էլ լուծում չեն ստացել:

Նշել է, որ նախաքննական մարմնի կողմից միջնորդություն էր ներկայացվել դատարան Ավետիք Չալաբյանի նկատմամբ ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին, որը դատարանի համապատասխան որոշմամբ բավարարվել է մասնակի. կալանավորման ժամկետը երկարացվել է 15 (տասնհինգ) օր ժամկետով այն պատճառաբանությամբ, որ... դեռեւս առկա են չհարցաքննված, սակայն դեպքի վերաբերյալ էական տեղեկություններ տիրապետող հնարավոր անձինք, որպիսի պայմաններում մեղադրյալը կարող է ազդել վկաների վրա…

Ըստ փաստաբանի՝ դատարանն իր որոշման մեջ ներառել է ակնհայտ կեղծ տեղեկություններ եւ նշված կեղծ տեղեկությունների հիման վրա երկարացրել է Ավետիք Չալաբյանի կալանքի ժամկետը: Նույնիսկ դատական քննության ընթացքում դատարանի հարցադրմանը, թե ինչ գործողություններ են նախատեսվում կատարել Ավետիք Չալաբյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու համար, քննիչը հայտնել է, որ նախաքննությունը փաստացի ավարտվել է, եւ անհրաժեշտ է միայն մեղադրական եզրակացությունը ուղարկել դատախազի հաստատմանը:

Այսինքն, տվյալ պարագայում քննիչը «արդարադատություն իրականացնելու պարտականություն ունեցող դատավոր»-ին հայտնել էր, որ չկա այլ քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտություն, եւ միայն մեղադրական եզրակացությունը պետք է ուղարկվի դատախազին, սակայն դատավորը Ավետիք Չալաբյանին պահում է կալանքի տակ գոյություն չունեցող եւ չկատարվող քննչական գործողությունների կատարման համար: Վերոնշյալ եւ այլ քրեադատավարական կանոնների խախտման առկայության պայմաններում փաստաբանը գտնում է, որ Ավետիք Չալաբյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումն ունի շատ հստակ քաղաքական երանգներ, որոնք այլ հանգամանքների համադրմամբ թույլ են տալիս Ավետիք Չալաբյանի կալանավորումը դիտարկել ԵՍԽՎ 2012 թվականի թիվ 1900 բանաձեւի շրջանակներում եւ պնդել, որ Ավետիք Չալաբյանը քաղաքական բանտարկյալ է:

Նախ, փաստաբանի համոզմամբ, չկա Ավետիք Չալաբյանի կողմից իրեն մեղսագրվող արարքը կատարված լինելու վերաբերյալ հիմնավոր կասկած, երկրորդ՝ Ավետիք Չալաբյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումն ու դրա շրջանակներում կալանավորումը կրում են խտրական բնույթ, երրորդ՝ Ավետիք Չալաբյանին ազատությունից զրկելն ուղեկցվել է քրեադատավարական ընթացակարգերի կոպտագույն խախտումներով՝ սկսած բերման ենթարկելու պրոցեսից, վերջացրած կալանավորման վերաբերյալ միջնորդության քննարկման համար դատարանի կողմից քննչական մարմնի զանգով նիստը հետաձգելով, կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդության քննությունով, Արուսյակ Ալեքսանյանի ապօրինի դատական ակտով, քննիչի եւ դատախազի կողմից դատավարական ժամկետների եւ կարգի դիտավորյալ խախտումով, չորրորդ՝ քաղաքական դրդապատճառներով: Փաստորեն, հերթական անգամ ականատեսն ենք գործող իշխանության կամայական կալանավորումների արատավոր երեւույթին, ինչի վառ ապացույցն է նաեւ Նիկոլ Փաշինյանի «մահաբեր կորտեժի» զոհ Սոնա Մնացականյանին վրաերթի ենթարկածի՝ առ այսօր ազատության մեջ գտնվելու հանգամանքը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՐՑ

ԱՄՆ պետքարտուղարը, ինչպես նաեւ ամերիկացի այլ բարձրաստիճան պաշտոնյաներ բոլոր մակարդակներում շարունակում են աշխատանքը Հայաստանի եւ Ադրբեջանի հետ՝ շարունակելով առաջարկել ամերիկյան կողմի աջակցությունը՝ հանուն երկարաժամկետ ու համապարփակ խաղաղության: Այս մասին հայտնել է ԱՄՆ պետդեպի խոսնակ Նեդ Փրայսը: Այն դիտարկմանը, որ, ի տարբերություն պետդեպի, որն իր հայտարարությունների մեջ շարունակաբար հիշատակում է խնդրի կարգավորման գործընթացում միջնորդ մարմնի՝ Մինսկի խմբի համանախագահության ձեւաչափի մասին, Ադրբեջանի նախագահն ամեն օր վատաբանում է այն, Փրայսը պատասխանել է. «Մենք մեր հայտարարությունների մեջ հստակ ասել ենք, որ ԱՄՆ-ն պատրաստ է աջակցել այս երկու երկրներին ու համախոհ գործընկերներին ցանկացած տարբերակով կամ ձեւաչափով, որն արդյունավետ կլինի»:

ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ Է

Վանաձորի ընտրված համայնքապետ, քաղբանտարկյալ Մամիկոն Ասլանյանին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխել են քաղաքացիական հիվանդանոց. տեղեկացնում է «Հայրենիք» կուսակցության խորհրդի անդամ Արսեն Բաբայանը:

ՔՆՆՎԵԼ Է

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ 391 ԳՈՐԾ

2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ենիչական կոմիտեի վարույթում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (2003թ.) համապատասխան հոդվածներով քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 391 քրեական գործ,

որից՝ 8-ը քննվել է 104-րդ հոդվածով նախատեսված սպանության, 1-ը՝ 109-րդ հոդվածով նախատեսված անզգուշությամբ մահ պատճառելու, 6-ը՝ 112-րդ հոդվածով նախատեսված դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 7-ը՝ 113-րդ հոդվածով նախատեսված դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 20-ը՝117-րդ հոդվածով նախատեսված դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 183-ը՝ 118-րդ հոդվածով նախատեսված ծեծի, 11-ը՝ 119-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, 3-ը՝131-րդ հոդվածով նախատեսված մարդուն առեւանգելու, 1-ը՝ 133-րդ հոդվածով նախատեսված ազատությունից ապօրինի զրկելու, 51-ը՝ 137-րդ հոդվածով նախատեսված սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 1-ը՝ 139-րդհոդվածով նախատեսված սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, 3-ը՝ 141-րդ հոդվածով նախատեսված 16 տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության, 1-ը՝ 142-րդ հոդվածով նախատեսված անառակաբարո գործողությունների, 2-ը՝144-րդ հոդվածով նախատեսված անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու, 2-ը՝ 167-րդ հոդվածով նախատեսված ծնողներից երեխային ապօրինի բաժանելուն կամ երեխային փոխելու, 31-ը՝ 167.1-րդ հոդվածով նախատեսված ծնողի կամ այլ մերձավոր ազգականի եւ երեխայի միջեւ տեսակցության իրականացմանը խոչընդոտելու, 1-ը՝ 168-րդ հոդվածով նախատեսված խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքին կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի, 1-ը՝169.1-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելու, 2-ը՝ 170-րդ հոդվածով նախատեսված երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելու, 1-ը՝ 171-րդ հոդվածով նախատեսված երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, 9-ը՝ 173-րդհոդվածով նախատեսված ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու, 3-ը՝ 185-րդ հոդվածով նախատեսված գույքը դիտավարությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 21-ը՝ 353.1-րդ հոդվածով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու, իսկ 22-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

391 քրեական գործից 53-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ եւ 56 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան, 123 քրեական գործի վարույթ կարճվել է, որից 39-ը՝ արդարացնող, իսկ 84-ը՝ ոչ արդարացնող հիմքով, 8 քրեական գործի վարույթ կասեցվել է, որից 4-ը՝ հանցանք կատարած անձին հետախուզելու, իսկ 4-ը՝ հանցանք կատարած անձը հայտնի չլինելու պատճառաբանությամբ: 7 քրեական գործ ուղարկվել է ըստ ենթակայության, 55-ը միացվել է, 145 քրեական գործ փոխանցվել է 2022թ. հուլիս ամիս:

Վերը նշված քրեական գործերով 128 անձ ներգրավվել է որպես մեղադրյալ, որից՝2-ը եղել են 14-18 տարեկան, 55-ը՝18-35 տարեկան, 71-ը՝35 տարեկանից բարձր: 7 մեղադրյալ եղել են նախկինում դատապարտված: Ընտանիքում կատարված հանցագործություններից 4-ը կատարվել են մոր կողմից, որից 3-ը՝անչափահաս զավակի նկատմամբ, 7-ը՝հոր կողմից, որից 6-ը՝ անչափահաս զավակի նկատմամբ, 2-ը՝ խորթ մոր կողմից՝անչափահաս խորթ զավակի նկատմամբ, 2-ը՝ խորթ հոր կողմից՝ անչափահաս խորթ զավակի նկատմամբ, 4-ը՝ եղբոր/քրոջ կողմից, 3-ը՝ պապի/տատի կողմից, 9-ը՝ զավակի կողմից (այդ թվում՝ որդեգրված), 4-ը՝ ամուսիններից կնոջ կողմից, 85-ը՝ ամուսիններից տղամարդու կողմից, 4-ը՝ թոռան կողմից, 4-ը՝ ամուսնու ծնողների կողմից:

Նշված 391 քրեական գործով 296 անձ ճանաչվել է որպես տուժող, որից՝32-ը՝մինչեւ 12 տարեկան, 6-ը՝12-14 տարեկան, 3-ը՝ 14-16 տարեկան, 17-ը՝ 16-18 տարեկան, 122-ը՝18-35 տարեկան, 116-ը՝35-ից բարձր:

ԼՈՒՐԵՐ

ՆՌՆԱԿ Է ՊԱՅԹԵՑՐԵԼ

Հուլիսի 27-ին ոստիկանություն զանգած տղամարդը հայտնել էր, որ Կապանի Բաղաբերդ թաղամասի շենքերից մեկի բակում վիճաբանություն է: Շենքի բնակիչներից մեկը բակում ավտոմեքենան արագ վարելու համար դիտողություն էր արել հարեւան շենքի 37-ամյա բնակչին, ինչից վիճաբանություն էր սկսվել, որի ընթացքում էլ 37-ամյա երիտասարդը, իր բնակարանի խորդանոցից վերցնելով «ՌԳԴ» տեսակի նռնակը, իջել էր բակ եւ վախեցնելու նպատակով պայթեցրել, ինչից հետո դիտողություն արած տղամարդը ծեծի էր ենթարկել նրան: 37-ամյա տղամարդը ձերբակալվել է:

ԲԵՐՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի եւ Էրեբունու բաժնի միջոցառումների շնորհիվ հուլիսի 26-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո գծային բաժին է բերվել 24-ամյա Հուսիկ Հ.-ն, որը հուլիսի 1-ից ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի մեղադրանքով: Խափանման միջոցը՝ստորագրություն:

ՈՒՇԱԳՐԱՎ ԴԵՊՔ

Ուշագրավ դեպք է տեղի ունեցել Հրազդան քաղաքում: Ըստ բնակիչների՝ միկրոշրջանի 59 շենքից 16 տարեկան աղջիկը, ննջասենյակի պատուհանից նետվելով, փորձել է ինքնասպան լինել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ վերջինիս գործողությունները կանխվել են: Իսկ թե ինչու է նա գնացել այդ քայլին, հանգամանքները պարզվում են:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԻ

Հուլիսի 26-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ոստիկանության Շենգավիթի բաժին ահազանգ է ստացվել, որ Եղիշե Թադեւոսյան 6-րդ շենքի մոտ՝ մանկապարտեզի հարեւանությամբ՝ բաց տարածքում, տղամարդու դի կա: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են դիակի ինքնությունը:

ԿՈՏՐԵԼ Է

Արմավիրի մարզում հուլիսի 27-ին ավտովթար է տեղի ունեցել. Երեւան-Արմավիր ավտոճանապարհի 16?5 կմ հատվածում՝ Զվարթնոց վարչական տարածքում, բախվել են Արմավիրի մարզի բնակիչներ 34-ամյա Գ. Խաչատրյանի վարած Nissan Teana մակնիշի եւ 31-ամյա Դ. Շիրվանյանի վարած Nissan Versa մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով 1 հոգի տեղափոխվել է «Վաղարշապատ» բժշկական կենտրոն: Բախման հետեւանքով Nissan Teana-ն դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել կամրջի երկաթե ճաղավանդակին, կոտրել այն եւ մոտ 20 մետր առաջ ընթանալով՝ հայտնվել կամրջի տակով անցնող ճանապարհին:

ԼՈՒՐԵՐ

ՊԵՏՏՈՒՐՔ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ

Առցանց տաքսիների համար յուրաքանչյուր փոխադրման դեպքում կսահմանվի 100 դրամ պետական տուրք? Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը նախագիծ է ներկայացրել հանրային քննարկման: Օրենսդրական փաթեթով առաջարկվում է կանոնակարգել էլեկտրոնային հարթակների միջոցով ուղեւորների պատվերներ գրանցող եւ փոխանցող կազմակերպությունների գործունեությունը, որը փաստացի դուրս է մնում վերահսկողությունից: Առաջարկվում է էլեկտրոնային հարթակների միջոցով ուղեւորների պատվերներ գրանցելու եւ փոխանցելու գործունեությունը սահմանել ծանուցման ենթակա գործունեությունը, ինչպես նաեւ հարկային պարտավորություններ են սահմանվում տնտեսական գործունեություն իրականացնողների համար՝կիրառելով նոր մեխանիզմներ, եւ ապահովել օրինական ուղեւորափոխադրող կազմակերպությունների համար բարենպաստ մրցակցային միջավայրը:

2300 ՄԱՐԴ Է ՊԱՀՎՈՒՄ

ՀՀ-ի տարածքում գործող 10 ՔԿՀ-ներում ընդհանուր առմամբ 2300 պահվող անձ կա: Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բուժօգնության կազմակերպման, սպասարկման եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Նաիրա Բաբայանը:

«Բանտարկյալներից 676-ը կամ 35%-ը խրոնիկ հիվանդություններ ունեն: Տարածվածությամբ առաջին տեղում են սրտանոթային համակարգի հիվանդությունները, երկրորդ տեղում են աղեստամոքսային հիվանդությունները»,- նշեց Բաբայանը:

Ըստ նրա՝ հեպատիտ C ունի 330 բանտարկյալ, որոնցից 77-ը բուժում են ստանում: 30%-ը բուժման կուրսը կավարտեն օգոստոսի կեսերին:

Բաբայանը նշեց, որ քայլեր են ձեռնարկվում ՔԿՀ-ներում հիվանդությունների տարածումը նվազագույնի հասցնելու համար, որպեսզի մինչեւ 2025 թվականը նման դեպքերի թիվը զրոյի հասցնեն:

Նա պարզաբանեց, որ յուրաքանչյուր բանտարկյալ ՔԿՀ ընդունվելիս բուժզննում է անցնում՝ արտաքին զննություն, ԷՍԳ, որովայնի հատվածի ՈՒՁՀ, ստուգվում է ճնշումը, մարմնի զանգվածի ինդեքսը եւ այլն:

Բացի այդ, բանտարկյալները բուժզննում են անցնում ամեն տարի. վերոնշյալին գումարվում են մի շարք հետազոտություններ, այդ թվում՝ արյան: Հիվանդության բացահայտման դեպքում բուժառուն լրացուցիչ հետազոտություններ է անցնում:

Հիշեցնենք, որ, 2021 թվականի տվյալներով, Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում 2142 անձ էր պահվում, որոնցից 965-ը՝ դատապարտյալ (86-ը՝ցմահ), 1177-ը՝կալանավոր:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 34 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՌԱՄՄՅԱ ՀԱՎԱՔՆԵՐ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղը 1990-ական թվականների առաջին կեսին հերոսական տարեգրություն գրեց: Գյուղը դիմակայեց խորհրդային զինուժի, ադրբեջանական ՕՄՕՆ-ի ոտնձգություններին: Ոսկեպարի գրեթե ողջ բնակչությունը կամավորագրվեց գյուղի ինքնապաշտպանությանը: 2021թ. Ոսկեպարի 7 բնակչի եռամսյա վարժական հավաքներին մասնակցելու ծանուցագիր է ուղարկվել, սակայն 7-ից միայն 2-ն է մասնակցել այդ հավաքին: Ոսկեպարի բնակիչները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մեզ տեղեկացրին, որ այդ տարի գյուղի 7 բնակիչների եռամսյա զինվորական հավաքներին մասնակցելու ծանուցագիր է ուղարկվել, սակայն ոչ ոք դրան չի մասնակցել: Ոսկեպարի բնակիչները չեն ցանկացել թեկուզ 3 ամսով հեռանալ իրենց տներից, կտրվել առօրյա գործերից եւ մասնակից դառնալ եռամսյա հավաքի, իսկ այդ հավաքներին պարտադրումն էլ նախկին տարիների նման չի կիրառվում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

Երեւանի բնակիչ, 1983թ. ծնված Անի Մասիսի Խաչատրյանը 2017թ. հոյեմբերի 21-ից Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղի հեռակա ուսուցման բաժնում աշխատել է որպես ընդհանուր մանկավարժության եւ հոգեբանության տեսուչ: Նրա եւ ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնօրինության միջեւ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվել: 2022թ.-ին հաստիքի կրճատման պատճառաբանությամբ Անի Խաչատրյանի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է: 2022թ. մարտի 21-ին Անի Խաչատրյանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ «Երեւանի պետական համալսարան» հիմնադրամի Իջեւանի մասնաճյուղի՝ աշխատանքի ազատման հրամանն անվավեր ճանաչելու, մինչեւ իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու, իրավունքը խախտող գործողությունները կանխելու եւ վերացնելու, ԵՊՀ ԻՄ-ում իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատավարձը հատուցելու պահանջներով: Մարտի 28-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու եւ պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին: Ապրիլի 18-ին քաղաքացիական գործով պատասխանողը՝ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Անուշավան Մակարյանը, դատարան է մուտքագրել դիմում՝ քաղաքացիական գործով ապացույցներ ներկայացնելու մասին: Հունիսի 22-ին դատարան է մուտքագրվել հայցվոր Ա. Խաչատրյանի միջնորդությունը՝ հայցի առարկան փոփոխելը (լրացնելը) թույլատրելու մասին, դատարանը բավարարել է այդ միջնորդությունը: Հուլիսի 18-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանը որոշում է կայացրել նշված գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին: Դատական հաջող նիստը նշանակված է սեպտեմբերի 13-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽԱՂԱՂԱՊԱՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՈՐ ԵՐԿՐՈՒՄ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՌՈՒՄՆԵՐԸ

2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարությամբ Ռուսաստանը Արցախի հանրապետությունում խաղաղարար առաքելություն է իրականացնում: Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների կողմից ստորագրված հայտարարության համաձայն՝ հակամարտության գոտում ծառայության է անցել 1960 ռուս զինծառայող: Հավաքակազմի հիմքը 15-րդ մոտորաձգային Ալեքսանդրիա բրիգադի զինվորականներն են (տեղակայված Սամարայի շրջանում): Հակամարտության գոտում ուժերի գտնվելու ժամկետը 5 տարի է՝ երկարաձգման հնարավորությամբ, եթե երեք կողմերից որեւէ մեկի կողմից առարկություններ չլինեն: 2020-ի նոյեմբերից ի վեր ականազերծման աշխատանքներ իրականացնելիս ռուս 1 սպա է զոհվել:

Ռուս խաղաղապահ զորքերը խորհրդային միության կազմաքանդումից հետո առաջին առաքելությունը ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի շրջանակներում նախկին Հարավսլավիայի տարածքում են իրականացրել: Ռուս խաղաղապահները Բոսնիայից դուրս են բերվել 2003-ին: 1999-ին ավելի քան 4 հազար խաղաղարար զինվորականներ Կոսովո են ուղարկվել, առաքելությունն ավարտվել է 2003-ին: Ռուսական կողմը 4 տարվա ընթացքում 12 զոհ է ունեցել Կոսովոյում:

1992-ի հուլիսին Սոչիում Ռուսաստանի ու Վրաստանի մինչեւ կնքված պայմանագրի համաձայն՝ միացյալ խաղաղապահ ուժեր մտցվեցին վրաց-օսական հակամարտության գոտի: Ռուսաստանից խաղաղապահ գործառույթներն իրականացնում էին Հյուսիսային Կովկասի ռազմական օկրուգի 58-րդ բանակի կազմավորումներն ու զորամասերը: Խաղաղարար առաքելությունը շարունակվել է մինչեւ 2008 թվականի օգոստոս՝ վրաց-օսական պատերազմ: Հարավային Օսիայի բնակիչներին պաշտպանելու նկատառումներով, ռուս խաղաղապահներից բացի, պաշտոնական Մոսկվան պատերազմի ժամանակ ավելացրեց զինվորականների թիվը: Հնգօրյա ռազմական գործողությունների ընթացքում ռուս զինվորականների կորուստները, տարբեր տվյալներով, 64-ից 74 են եղել: Օգոստոսյան պատերազմից հետո Մոսկվան ճանաչեց Վրաստանից պոկված երկու շրջանների՝ Հարավային Օսիայի ու Աբխազիայի հանրապետություններն ու հակամարտությունները լուծված համարեց:

1992-ի Մոլդովան եւ Ռուսաստանը Մերձդնեստրի զինված հակամարտությունը կարգավորելու նպատակով են պայմանագիր կնքում: Թեեւ ներկայումս հակամարտությունը սառեցված է, բայց ավելի քան 3000 խաղաղապահների առաքելությունը շարունակվում է:

1993 թվականի սեպտեմբերին ԱՊՀ անդամ պետությունները խաղաղապահ ուժերի կոալիցիա են կազմում՝կարգավորելու համար Տաջիկստանում տիրող իրավիճակը: Երկրում ընթացող քաղաքացիական պատերազմը սաստելու գործողություններում Ռուսաստանից մոտ 6 հազար մարդ էր ներգրավված:

ԱՊՀ անդամ երկրները կոլաիցիոն նմանատիպ հուշագիր նաեւ 1994-ին են ստորագրել, ինչից հետո Ռուսաստանը մոտ 1800 զինվորական է գործուղել Աբխազիա:

Ռուսական զորքերն այժմ էլ շարունակում են համագործակցել ՄԱԿ-ի հետ: Ռուսաստանը ներկայացնող զինվորականները ներգրավված են Կոնգոյում, Արեւմտյան Սահարայում, Կոսովոյում, Հարավային Սուդանում, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունում խաղաղարար առաքելություն իրականացնող զորախմբերում:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Հայաստանի անկախության պատմության մեջ կանցկացվի երրորդ մարդահամարը. այն կտեւի 10 օր, կհավաքագրվեն տվյալներ նաեւ մարդկանց կրթության, առողջության, աշխատանքի, բնակպայմանների վերաբերյալ, արդյունքները պատրաստ կլինեն 1 տարուց:

«Մարդահամարը կանցկացվի 2022 թվականի հոկտեմբերի 13-22-ը ներառյալ: Կորոնավիրուսի համավարակի պատճառով մարդահամարը 2 անգամ հետաձգվեց. պետք է անցկացվեր 2020-ին, հետաձգվեց 2021-ին, եւ վերջնական որոշվեց անցկացնել 2022 թվականին: Ըստ օրենքի՝ մարդահամար անցկացվում է յուրաքանչյուր 10 տարին մեկ, սրանից առաջ Հայաստանում անցկացվել են 2001 եւ 2011 թվականներին:

Այս տարի առաջին անգամ մարդահամարի համար օգտագործվելու է համակցված մեթոդը: Հիմնական կարեւոր չորթվերը ստացվելու են վարչական ռեգիստրից՝ ազգություն, քաղաքացիություն, տարիք, սեռ, թեեւ այդ հարցերը հետո ուղղվելու են նաեւ հարցվողներին: Հարցերը նախորդ մարդահամարների համեմատությամբ շատ չեն փոխվել, ավելացել են որոշակի հարցեր, օրինակ՝ առողջության վիճակի եւ այլնի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ ներառված է լինելու 39 հիմնական հարց եւ տնային տնտեսության բնակպայմանների վերաբերյալ եւս 5 հարց:

Եթե Հայաստանում անցկացված նախորդ մարդահամարների արդյունքում տվյալները մուտքագրվել են համակարգ, որի համար հատուկ մուտքագրողների են վարձել, ապա հիմա, երբ հարցաթերթիկներն էլեկտրոնային են, դա արվում է միանգամից էլեկտրոնային ձեւով, այսինքն՝ լրացված հարցաթերթն ավտոմատ կերպով ուղարկվում է սերվեր: Այսպիսով, կհրապարակվեն տվյալներ մշտական բնակչության, առկա բնակչության, ժամանակավոր բացակայության, բնակչության սեռի, տարիքի, կրթության, սոցիալական, առողջական վիճակի եւ այլնի վերաբերյալ ընդհանրացված կերպով. չի հրապարակվելու անհատական ոչինչ:

ՍՈՉԻՈՒՄ ԿՔՆՆԱՐԿԵՆ

Ռուսաստանի եւ Թուրքիայի նախագահներ Վլադիմիր Պուտինն ու Ռեջեփ Թայիփ Էրդողանը օգոստոսի 5-ին Սոչիում կայանալիք հանդիպանը կարող են քննարկել հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ Ուկրաինայում, սեւծովյան տարածաշրջանում եւ Սիրիայում տիրող իրավիճակը: Այս մասին հայտարարել է Անկարայում ՌԴ դեսպան Ալեքսեյ Երխովը:

Հիշեցնենք, որ հուլիսի 19-ին Թեհրանում կայացան Ռուսաստանի եւ Թուրքիայի առաջնորդների երկկողմ բանակցությունները: Երկկողմ հարաբերություններից բացի Պուտինը եւ Էրդողանը քննարկեցին Ուկրաինայում տիրող իրավիճակը, «հացահատիկային խնդիրը», սիրիական կարգավորումն ու արցախյան հարցը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են իրականացրել Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մովսես, Այգեպար, Չինարի, Այգեձոր, Արծվաբերդ եւ Չորաթան գյուղերում:

Ուսումնասիրվել են վարչական շրջաններում բնակիչներին բժշկական օգնության տրամադրման եւ բուժսպասարկման հնարավորություններն ու խնդիրները, երեխաների կրթության իրավունքի իրացման կարիքները եւ պայմանները եւ բնակիչների սոցիալ-տնտեսական իրավունքների հետ կապված մի շարք հարցեր: Այս նպատակով առանձնազրույցներ են իրականացվել բնակիչների հետ:

Այցերի ընթացքում արձանագրվել են խնդիրներ՝ կապված հաշմանդամության կարգավիճակի տրամադրման գործընթացի, առողջության պահպանման իրավունքի, ուսումնական հաստատություններում մասնագետների վերապատրաստումների ոչ բավարար լինելու, կոնկրետ դեպքերում՝ համայնքահեն ծառայությունների սղության կամ բացակայության հետ: Համակարգային խնդիրներ են արձանագրվել՝ կապված խմելու եւ ոռոգման ջրի մատակարարման, զբաղվածության, բնակչության անվտանգության ապահովման հետ:

Արձանագրված խնդիրները քննարկվել են նաեւ համայնքապետարանների, ուսումնական հաստատությունների եւ վարչական շրջաններում բուժօգնություն եւ բուժսպասարկում իրականացնող անձնակազմերի ներկայացուցիչների հետ:

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ «Թույլատվական փաստաթղթեր» էլեկտրոնային համակարգին միացվել են նաեւ ՀՀ պաշտպանության, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունները եւ ՀՀ ոստիկանությունը:

Նշենք, որ «Թույլատվական փաստաթղթեր» էլեկտրոնային համակարգը գործարկվել է 2021թ. հոկտեմբերի 1-ից: Գործընթացն իրականացվում է փուլերով: Ծրագրին աստիճանաբար միանում են թույլատվական փաստաթղթերի տրամադրման գործընթացում ներգրավված 17 պետական գերատեսչություն եւ կազմակերպություն: Ներկա դրությամբ համակարգում արդեն իսկ ընդգրկված է 8 պետական մարմին:

«Թույլատվական փաստաթղթեր» համակարգի ներդրման արդյունքում կպարզեցվի մաքսային ձեւակերպումների եւ թույլատվական փաստաթղթերի տրամադրման գործընթացը, նվազագույնի կհասցվեն պետական մարմինների հետ շփումները, կխնայվի ժամանակ եւ ռեսուրս: Համակարգի ներդրման գործընթացը շարունակվում է:

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՌԻՍԿԵՐ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արժույթի միջազգային հիմնադրամը հրապարակել է Գլոբալ տնտեսության հեռանկարների հուլիսյան կանխատեսումները: Այս մասին նշել է ՀՀ ֆինանսների նախկին նախարար Վարդան Արամյանը:

«Մռայլ եւ ավելի անորոշ - Gloomy and More Uncertain. ահա այսպես է կոչել նոր տնտեսական իրավիճակը, որի ներքո տնտեսական աճի իր կանխատեսումները վատացրել է՝ ապրիլյան կանխատեսումների համեմատ: Ընդ որում՝ ԱՄՀ-ն կարծում է, որ 2023թ-ը ավելի թույլ տարի է լինելու՝ հիմնականում պայմանավորված ներկայիս գործոնների լագային էֆֆեկտով (Չինաստանում Քովիդի համավարակ, անշարժ գույքի շուկայի խնդիրներ եւ տնտեսության թուլություններ, տրասպորտային խնդիրներ, էներգակիրների դեֆիցիտ եւ գների աճ, բարձր գնաճ եւ այլն) եւ, հատկապես, աշխարհի ԿԲ-ների տոկոսադրույքների ագրեսիվ աճերի արդյունքում:

Այսպես, աշխարհի տնտեսական աճը 2022 եւ 2023թթ-ին վատացրել է -0,4 եւ -0,7 տոկոսային կետերով՝ սահմանելով 3,2% եւ 2,9%: ԱՄՆ, Եվրոպա եւ Չինաստանի տնտեսություններում կանխատեսումների պատկերը հետեւյալն է՝

ԱՄՆ - 2022-ին 2,3%, 2023-ին 1,0%, վատթարացումները համապատասխանաբար -1,4 եւ -1,3 տոկոսային կետ,

ԵՄ - 2022-ին 2,6%, 2023-ին 1,2%, վատթարացումները համապատասխանաբար -0,2 եւ -1,1 տոկոսային կետ,

Չինաստան - 2022-ին 3,3%, 2023-ին 4,6%, վատթարացումները համապատասխանաբար -1,1 եւ -0,5 տոկոսային կետ:

Հետաքրքրական է, որ ՌԴ-ի տնտեսական աճի կանխատեսումները 2022թ-ի համար բարելավել է, սակայն վատացրել 2023թ-ի համար՝

ՌԴ - 2022-ին -6,0%, 2023-ին -3,5%, բարելավումը համապատասխանաբար 2,5 տոկոսային կետ եւ վատթարացումը -1,2 տոկոսային կետ:

Փաստացի ՌԴ տնտեսության համար կուտակային երկու տարիների համար աճը բարելավել է, եւ սա հերթական փաստարկն է լինելու Եվրոատլանտիկ բլոկի կողմից կիրառվող սանկցիաների ջատագովների օպոնենտների համար, որ սանկցիաները ցանկալի արդյունք չեն տալիս. փաստացի ավելի շատ վնասում են Եվրոատլանտիկ բլոկի տնտեսություններին, քան ՌԴ-ին: Ինքս կարծում եմ, որ կարճաժամկետում թերեւս կարելի է դա ասել (թեեւ ամեն դեպքում ՌԴ-ում անկում է կանխատեսում ԱՄՀ-ն), սակայն երկարաժամկետում ՌԴ տնտեսությունը տեխնոլոգիական լուրջ հետնահանջ է ունենալու եւ կորցնելու է տնտեսական պոտենցիալ:

Ինչ վերաբաբերում է Հայաստանին, ապա գլոբալ զարգացումները եւ այս կանխատեսումներն ամրացնում են իմ այն փաստարկները, որ ներկայիս տնտեսական ակտիվության 11,8% աճն իր մեջ ունի էական ռիսկեր: Այն հիմնականում արտաքին գործոնների՝ այցելուների աճի եւ ֆինանսական ներհոսքի արդյունք է, եւ երբ դրանք թուլանան կամ կանգ առնեն, մեր տնտեսությունը բախվելու է էական դժվարությունների հետ: Երբ է դա լինելու՝ դժվար է ասել (6 ամիս, 1 կամ 1,5 տարի հետո), քանի որ այն ուղղակի առնչվում է աշխարհաքաղաքական զարգացումների հետ, բայց որ ունենք պահանջարկով քաշվող տնտեսական աճ, դա փաստ է, որը վտանգավոր է»,- մանրամասնել է Արամյանը:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՆ ԽԱԽՏՎԵԼ

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի տարեկան գործունեության ծրագրով հաստատված տեխնիկական եւ հրդեհային անվտանգության բնագավառում 2-րդ եռամսյակում պլանավորված ստուգումների շրջանակներում Գեղարքունիքի տարածքային բաժնի կողմից Ա/Ձ Ա. Սիրականյանին, Ա/Ձ Հ. Սուվարյանին եւ Ա/Ձ Գ. Պետրոսյանին պատկանող բենզալցակայաններում իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ վերջիններիս բենզալցակայանները գրանցված չեն արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցման ռեեստրում եւ չունեն տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության եզրակացություններ:

Խախտվել են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի եւ 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ԱՎՕ շահագործողը խախտել է նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին պահանջները:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից երեք տնտեսավարողները ենթարկվել են վարչական պատասխանատվության՝ յուրաքանչյուրը՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

«Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի համաձայն՝ գնումների ոլորտում մրցակցության ապահովման եւ խտրականության բացառման նպատակով իրականացվում են վերահսկողական գործողություններ:

Ծառայության կողմից 2022 թվականի 1-ին կիսամյակում մշտադիտարկվել են թվով 2154 գնման ընթացակարգերի հրավերներ, որտեղ արձանագրվել են 96 դեպքով գնման ընթացակարգերի անհամապատասխանություններ գործող գնումների մասին իրավակարգավորումներին: 84 դեպքով իրականացվել է գնման գործընթացի հրավերներում ներառված տեխնիկական բնութագրերի փոփոխություն:

Արձանագրված անհամապատասխանությունների արդյունքում տրվել են կնքված պայմանագրերի լուծման եւ պատասխանատու աշխատակիցներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առաջարկություններ: Մասնավորապես, 7 դեպքով՝ գնումների գործընթացներին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված ընկերությունների հետ կնքված պայմանագրերով՝ 2 դեպքով լուծվել են արդյունքում կնքված պայմանագրերը, իսկ 5 դեպքով պատասխանատու աշխատակիցների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

ՀՀ ոստիկանության կողմից, որպես ոլորտի լիազոր մարմին, կասեցվել են թվով 3 պահնորդական ծառայություններ մատուցող ընկերություններին տրված հատուկ թույլտվությունները (լիցենզիա), իսկ թվով 3-ի մասով հայտ է ներկայացվել դատարան:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲՈՒՄ

«ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԻՄՈՒՆԻՏԵՏ ՈՒՆԵՄ»

«Ամարաս» դանս-ստուդիոյի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար Վիկա Մարտիրոսյանը ArmLur.am-ի հետ զրույցում խոսել է առաջիկա նորությունների, Նանուլի Play tur տեսահոլովակի շուրջ բաձրացած աղմուկի եւ քննադատությունների մասին:

«Ոչ մի ձեւով չեմ արձագանքում, մենք արդեն ընտանիքով իմունիտետ ունենք ինձ եւ Նանուլին ուղղված քննադատությունների դեմ: Սկզբում շատ ծանր ենք տարել, երբ դեռ նա չորս տարեկան էր, եւ կրկին նույն բումը մենք արեցինք նրա տեսահոլովակով, էլի առնչվեցինք հանրության մի հոծ բազմության, որ եւ լսում էին ամեն օր երգը, եւ դրան զուգահեռ քննադատում: Բայց մենք վաղուց բոլորին ապացուցել ենք, որ հեռուստաէկարններին արտիստ երեւացող Նանուլը կյանքում տարբերվում է հարյուր տոկոսով ամեն ինչով՝ թե՛ իր առօրյայով, թե՛ իր զբաղվածությամբ, եւ, ամենակարեւորը, մենք գիտենք, թե ինչ ենք անում եւ ինչի համար ենք անում: Նա բեմի մարդ է, նա արտիստ է, որը պետք է տեսահոլովակներում, թե բեմում տարբերվի իր տեսակով, ինչի համար ես շատ ուրախ եմ, որ կարողացել եմ այդպես անել, որ բոլորի մոտ հետաքրքրություն առաջանա: Ցավոք, հետաքրքրության հետ միասին սկսվում են նաեւ քննադատությունները, բայց մի շատ կարեւոր հանգամանք կա՝ ինչպես քննադատում են, այնպես էլ 24 ժամ դիտում են տեսահոլովակն ու լսում: Չկա մի այնպիսի սրճարան, որտեղ չինչի այդ երգը, չկա մի երեխա, որ չերգի եւ չպարի այդ երգի տակ: Ես քննադատություններն ընդունում եմ ադեկվատ եւ շատ նորմալ, եւ եթե չլինի քննադատություն, ուրեմն մեր աշխատանքը չի ստացվել»,-նշեց նա:

Վիկա Մարտիրոսյանի խոսքով՝ այս տարվա երկրորդ բումը սպասվում է սեպտեմբեր ամսվա վերջին:

«Մենք պատրաստվում ենք երեք տարի չհանգստանալուց հետո վերջապես այս տարի ընտանիքով մեկնել հանգստի, կհանգստանանք կգանք եւ արդեն կսկսենք աշխատանքային բուռն ծրագիրը՝ երգի ձայնագրում եւ տեսահոլովակի պատրաստում եւ նման շատ աշխատանքներ: Սեպտեմբերի վերջին կսկսեն տեսահոլովակի նկարահանումները, քանի որ այս ժամանակահատվածն է հարմար տեսահոլովակի համար: Կարծում եմ՝ այս անգամ կրկին կքննադատվենք, բայց երեւի թե ուրիշ ձեւով: Կարծում եմ՝ Նանուլը դեռ այս տարիքում իրավունք ունի եւ որպես պրոֆեսիոնալ պարուհի հանդես գալու, եւ երգչուհի:

Արդեն կարող ենք նրան որպես հետաքրքիր երգչուհի իր ոճով ու պրոյեկտով ներկայացնել: Նա, կարելի է ասել, ինձանից կայացած է, քանի որ իր գործին շատ լուրջ է մոտենում, եւ ոչ մեկը չի կարող նրան ստիպել ինչ-որ բան անել, որն ինքը չի ցանկանում»,- հավելեց պարուհին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՎԱՐՏՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ անցկացվում է ամենամյա Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը:

Միջոցառումն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի եւ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի համագործակցությամբ: Այն անցկացվում է «Ինքնաճանաչում. Էրեբունի» խորագրով եւ նվիրված է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանին ու այնտեղ ներկայացված Վանի թագավորության հնագիտական ժառանգությանը:

Հաջորդ փուլը ավարտվելու է սեպտեմբերի 15-ին: Հիշեցնենք, որ միջոցառումն անցկացվում է 2009 թվականից:

ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՐԵՐ

Արդեն մի քանի օր է, ինչ համացանցում աղմուկ են բարձրացել եւ քննարկումների առիթ դարձել երգչուհի Անետտա Աղաբեկյանի՝ համացանցում արված վերջին հրապարակումները:

Բանն այն է, որ երգչուհին լուսանկարներ եւ հոլովակ է հրապարակել, որ կատարում է նախահարսանեկան հավաքույթ՝ «դեվիշնիկ», կրել հարսանեկան քող եւ մակագրել՝ Это мой день: Սա երկրպագուների եւ հանրության մոտ տպավորություն է ստեղծել, որ երգչուհին պատրաստվում է ամուսնանալ:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել երգչուհու հետ եւ անձամբ նրանից իմանալ, թե ինչ են նշանակում այդ լուսանկարները, սակայն երգչուհին չցանկացավ բացել փակագծերը, միայն նշեց, որ շատ շուտով մեծ անակնկալ է սպասվում իր երկրպագուներին:

ԼՈՒՐԵՐ

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության չեմպիոն Երեւանի «Փյունիկ»-ը պատմական արդյունք է գրանցել՝ դուրս գալով ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի որակավորման երրորդ փուլ: Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի որակավորման երկրորդ տուրի պատասխան խաղում «Փյունիկ»-ը հյուրընկալվելիս 4:1 հաշվով հաղթել է Լյուքսեմբուրգի չեմպիոն «Դյուդելանժ»-ին եւ դուրս եկել ՉԼ որակավորման երրորդ փուլ: Երեւանյան թիմի կազմում աչքի ընկան Ժունինյոն, Լուկա Յուրիչիչը (դուբլ) եւ Յուսուֆ Օտուբանջոն: Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի որակավորման երրորդ փուլում «Փյունիկ»-ի մրցակիցը Սերբիայի չեմպիոն «Ցրվենա Զվեզդա»-ն է:

ԱՐԳԵԼՔ

Էստոնիայի իշխանությունները հինգ տարով արգելել են Руки вверх խմբի անդամների մուտքը երկիր: Էստոնիայի արտաքին գործերի նախարար Ուրմաս Ռեյնսալուն հայտարարել է, որ Ռուսաստանի գործողություններն Ուկրաինայում լիովին անընդունելի են եւ վտանգ են ներկայացնում Էստոնիայի եւ Եվրոպայի անվտանգության համար: Նա հավելել է, որ խմբի անդամների մուտքը երկիր արգելելը ճիշտ որոշում է:

«Ներքին գործերի նախարարության որոշումը՝ հինգ տարով մերժել Руки вверх խմբի անդամների մուտքն Էստոնիա միակ ճիշտ որոշումն է»,- ասել է Ռեյնսալուն՝ ընդգծելով, որ Էստոնիան անշեղորեն աջակցում է Ուկրաինային:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Իտալական «Ռոման» շքեղ շնորհանդես է կազմակերպել թիմի նորեկ Պաուլո Դիբալայի համար: Իտալական քաղաքակրթության պալատի հրապարակում մոտ 10 հազար երկրպագու է ողջունել արգենտինացի հարձակվողին: Դիբալան պորտուգալացի Ժոզե Մոուրինյոյի գլխավորած թիմում ստացել է 21 համարի խաղաշապիկը: 28-ամյա ֆուտբոլիստն անվճար է միացել «Ռոմային»: Նրա պայմանագիրը Թուրինի «Յուվենտուսի» հետ ավարտվել էր հունիսի 30-ին: Հռոմեական ակումբը Դիբալայի հետ կնքել է երեք տարվա պայմանագիր:

ՄՏԱԴԻՐ Է ՀԵՌԱՆԱԼ

Լոնդոնի «Չելսիի» հարձակվող Տիմո Վերները մտադիր է հեռանալ գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած թիմից: 26-ամյա գերմանացի ֆուտբոլիստի ներկայացուցիչներն այժմ բանակցում են Թուրինի «Յուվենտուսի», անգլիական «Նյուքասլի» եւ Դորտմունդի «Բորուսիայի» հետ: «Չելսին» դեմ չէ Վերների տրանսֆերին՝ ակնկալելով մոտ 40 միլիոն եվրո: 2020թ. հուլիսին «Չելսին» Վերների համար գերմանական «ՌԲ Լայպցիգին» վճարել էր 53 միլիոն եվրո: Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքն այժմ գնահատում է 35 միլիոն եվրո: Անցած մրցաշրջանում Վերները «Չելսիի» հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 37 հանդիպման, խփել 11 գոլ, կատարել 6 գոլային փոխանցում: Նրա պայմանագիրն անգլիական ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս:

● Հուլիսի 29-ին «Շանթ» ՀԸ-ում տեղի կունենա «Ռուբեն Հախվերդյան. «Աշնանային էլեգիա»» համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:

Լիլիթ Հունանյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,

2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,

3) 3x4 չափի լուսանկար՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից (ըստ անհրաժեշտության),

5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության),

7) նշված կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 2021-2022 ուսումնական տարվա սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում եւ ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք:

Մարինե Սամսոնյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված, 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գեղարքունիքի մարզում

Ոստիկանության Վարդենիսի բաժնում նյութեր են նախապատրաստվել հուլիսի 21-ին Գեղարքունիքի մարզում տեղի ունեցած դեպքի փաստով: Նշենք, որ այդ օրը «Հարավկովկասյան երկաթուղի»-ից ահազանգել են ոստիկանության Վարդենիսի բաժին եւ հայտնել, որ Վարդենիս-Շորժա գծահատվածում գնացքը հարվածել է 2 կովի եւ անցել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.07.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: